

ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ

Հայտնի պատմաբան և գրող Լեոյի (Առաքել Բարախանյան, 1860—1932) ստորև տալիս գրվող նամակները Հաղարյան ճեմարանի պրոֆեսոր, մեծանուն հայագետ Գրիգոր Խալաթյանին (1858—1912) արտացոլում են նրանց ստեղծագործական աշխատանքի մի շարք գրվագները և հարուստ տվյալներ են պարունակում հայագիտության պատմության վերաբերյալ։ Նամակները գրվել են 1902—1911 թթ. և պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Գրիգոր Խալաթյանի ֆոնդում (Մ Բաժին, № № 169—183)։

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

I

1902, օգոստոսի 7, Քիֆլիս.
«Մշակի» խմբագրատուն

Մեծապատիվ պարոն
Գ. Խալաթյան

«Մշակի» խմբագրությանը ուղղած Ձեր նամակով դուք խնդրում եք հաղորդել զավառական գրադարանների ցուցակը։ Դժբախտաբար, այդ հիմնարկությունները, որքան մեղ հայտնի է, այնքան շատ չեն, որ կարելի լինի նրանց անուններից ցուցակ կազմել։ Նախկին Հայոց Բարեգործական Ընկերության¹ գրադարանից մնացել են Շուշում, Կարսում և Ախալցխայում։ Բն ինչ գրության մեջ են այդ գրադարանները, մենք հաստատ չգիտենք։ Ընկերության ճյուղերը փակվելուց հետո նրանք հանձնված են եղել քաղաքային վարչություններին։ Գոյություն ունի քաղաքային գրադարան և Ալեքսանդրապոլում, իսկ Երևանում կա պ. Տրդատյանցի² գրադարանը, որը մի մասնավոր հիմնարկություն է. մի էժանագին գրադարան էլ Բաթումում է բացվել՝ մի վրացի տիկնոջ նախաձեռնությամբ։ Դուք ուզում եք իմանալ թե գոյություն ունեցող գրադարաններից որո՞նք են ավելի կարող հայերեն գրքերի։ Այդ հարցը հաղիվ թե կարողանա լուծել «Մշակի» խմբագրությունը, քանի որ ոչինչ տեղեկություններ չկան գրադարանների մասին։ Գիտենք միայն, որ ամենքը առհասարակ խեղճ ու աղքատ հիմնարկություններ են։ Եվ իսկապես ինչ կարող են անել զավառական քաղաքների վարչությունները, ունենալով շատ առհասարակ բյուջետներ, մանավանդ որ գրադարանները մեկանում դեռ շարունակում են համարվել ավելորդ չբեղություն։

Այժմյան ժամանակ նվերներ ուղարկվում են Պարսկաստան, ուր կա մի քանի հատ գրադարաններ, դեռ սրանք այնպիսի հիմնարկություններ են, որոնց բարեկարգության և երկարակեցության մասին ոչ մի իրավասություն չկա։ Եթե կամենում եք, մենք կուղարկենք Ձեզ այդ գրադարանների հասցեները, դուցե դուք լավ համարեք Ձեր նվերների մի մասը Պարսկաստան ուղարկել։

Օգուտ քաղելով այս առիթից, ես խնդրում եմ Ձեր ուղարկությունը հետևյալ հանգամանքի վրա։

Հալերեն զրբեր շատ են հարկավոր ինձ, որպեսզի կարողանամ առաջ տանել իմ «Հայերեն տպագրություն»՝ աշխատասիրությունը: Այստեղ հարուստ և մեծ զրադարաններ չկան և մինչև այժմ ես դործը տարել եմ իմ սեփական միջոցներով ղնած զրբերով: Սակայն ցավն այն է, որ բոլոր հարկավոր զրբերը ձեռք բերել չէ կարելի: Այսպես, անցյալ տարի ես Ռափայել Պատկանյանի մասին ուսումնասիրություն⁴ գրելիս անկարող եղա մի քանի խոսք ասել Տեր-Գաբրիելի⁵ մասին, քանի որ նրա հեղինակություններից ոչ մեկն էլ չկար ձեռքիս տակ և ներսիսյան դպրոցի զրադարանում էլ ոչինչ չկար:

Ահա այս հանգամանքը, որ ինձ սաստիկ նեղում է իմ աշխատությունների մեջ, հարկադրում է ինձ դիմել Ձեզ մի առաջարկությամբ. արդյոք Ձեր տրամադրության տակ զրած զրադարանում չե՞ն լինի այնպիսի հայերեն զրբեր, որոնք ինձ շատ հարկավոր լինեն: Ձեր նամակից ես իմացա, որ կան Ռափայել, Դաբրիել, Քերովբե՝ Պատկանյանների հրատարակությունները, որոնք ինձ չափազանց հարկավոր են: Դրանցից մի հատ կխնդրեի ինձ տալ:

Թե այդ զրբերը և թե ուրիշները ես կխնդրեի տալ ինձ հետևյալ պայմանով. ես ստանում եմ, վճարելով ինձանից ճանապարհածախսը, բաղում եմ ինձ հարկավոր տեղեկությունները և ապա ուղարկում եմ իմ հաշվով ուր դուք ցույց կտաք: Կամ եթե այսպես անհարմար կհամարեք, կառաջարկեի ուղղակի ծախել ինձ և փողը հատկացնել որեէ բարեգործական նպատակի ըստ Ձեր ցանկության:

Ես շատ լավ զգում եմ, որ այժմ իմ այս առաջարկությամբ Ձեզ անհարմար զրության մեջ եմ դնում: Բայց հույսով եմ, որ հայ գրողի անճարությունը, որ անշուշտ Ձեզ շատ լավ հայտնի է, ներելի կդարձնե իմ այս վարմունքը: Ինչ արած, մեղանում բարեկարգ հիմնարկություններ չկան և մի 10—15 տարի առաջ տպված գիրքը, եթե նա չկա զրավաճառանոցում, անհնար է գտնել: Այստեղ կա հայ հասարակական զրադարան⁷, բայց այդտեղ կարելի է գտնել միայն Կովկասում տպված զրբեր, այն էլ ոչ բոլորը: Այնպես որ ես հարկադրված եմ եղել Վենետիկից⁸ բերել տալ ժամանակավորապես նրանցից օգտվելու և հետ դարձնելու պայմանով: Այստեղ չկա մեր պարբերական հրատարակությունների մի ժողովածու անգամ՝ «Հյուսիսսփայլը» գտնել անկարելի եղավ և ես բերել տվի Շուշուց:

Այժմ կարծեմ Ձեզ համար հարգելի կլինեն այն շարժառիթները, որոնք ստիպեցին ինձ գրել վերոհիշյալ առաջարկությունը:

Խնդրեմ րնդունեմ խորին հարգանքներիս հավաստիքը՝

Ա. Բարախանյան

2

1902, սեպտեմբերի 1, Թիֆլիս

Մեծապատիվ պարոն

Գրիգոր Խալաթյանց

Ստացա Ձեր ուղարկած զրբերը և շտապում եմ հայտնել Ձեզ իմ խորին շնորհակալությունը այդ թանկագին նվերի համար, իբրև մի համեստ փոխարինություն՝ խնդրեմ րնդունեք ինձանից իմ սլատմական աշխատությունները¹, որ ուղարկում եմ Ձեզ նամակիս հետ:

Անշաղի ուրախացրեց ինձ Ձեր պատրաստականությունը օգնելու ինձ իմ աշխատությունների մեջ՝ գրքեր ուղարկելով։ Ձեր սիրալիր աջակցությունից ես կօգտվեմ մոտիկ ասպագայում, երբ կվերսկսեմ «Հայկական տպագրության» շարունակությունը։ Առ այժմ ինձ շատ կսպառնալիք ուղարկություն դարձնելով հետևյալի վրա։

Այն հատորի² մեջ, որ ես պիտի շուտով պատրաստեմ, խոսք պիտի լինի առհասարակ Հայկականների և մանավանդ կոմս Հովհաննես Հայկաբեկի³ մասին։ Դուք դեռ անցյալ տարի հայտնեցիք «Մշակի» մեջ⁴, որ Ձեր առաջարկությամբ կալված է մասնաժողով՝ Հայկականների թղթերը հրատարակելու համար⁵։ Մեր նորագույն պատմությամբ հետաքրքրվողի համար դա մի վերին աստիճանի կարևոր լուր էր և ես անհամբերությամբ սպասում եմ Ձեր այդ զեղեցիկ ձեռնարկությունը լույս հանելուն։ Բայց որովհետև այն ժամանակից այլևս ոչինչ տեղեկություն չերևաց մամուլի մեջ, ես ենթադրում եմ, որ գործը դեռ չէ սկսվել։ Դի՛շտ է արդյոք ենթադրությունս։ Եվ եթե Ձեր հրատարակությունը դեռ չուտով լույս չի տեսնի, կարելի՞ է արդյոք որ դուք ձեռնարանի արխիվից օգտվելը հնարավոր դարձնեիք ինձ համար։ Եթե կարելի է, ես շատ և շատ կխնդրեի Ձեզ, որ արտագրել տաիք ինձ համար կարևոր նյութերը։ Ամենայն ուրախությամբ և շնորհակալությամբ ես կվճարեի բոլոր ծախսերը։

Իմ «Հովսեփի կաթողիկոս Արղության»⁶ աշխատության մեջ ես, Հայկականների մասին խոսելիս, աչքիս առաջ ունեցել եմ համարյա բոլոր տպագրական աղբյուրները։ Համոզված եմ, որ դրանք շատ պակասավոր են, և դեռ շատ ու շատ են Հայկականների այնպիսի գործերը, որոնք բավականաչափ չեն լուսաբանված։ Ինձ համար շատ ցանկալի կլինեի «Հայկական տպագրության» երրորդ հատորի⁷ մեջ ավելի մանրամասն խոսել Հայկականների մասին, ավելի լավ բացատրել այն ահագին զեղքը, որ խաղացել է մեղանում այդ մեծահոգի տոհմը, մեր նորագույն պատմության այդ ամենափայլուն երևույթը։ Ահա այս պատճառով էլ ես խնդրում եմ Ձեր աջակցությունը։

Խոսելով Հայկականների մասին, չեմ կարող Ձեր ուղարկությունը չդարձնել մի ուրիշ մարդու վրա։ Տասնութերորդ դարում մենք ունեցել ենք և մի այլ նշանավոր գործիչ—էմին Հովսեփյան Հեղհաստանցի⁸։ Ռուսաց աղբյուրները շատ կցկտուր... տեղեկություններ են տալիս այդ մարդու մասին, բայց թե որքան նշանավոր դեմք է եղել նա, ցույց է տալիս այն հոգվածը, որ տպված է «Մասեաց աղավնի»⁹ ամսագրում (1856, էջ 269, «Հովսեփի էմին և էդմունդ Բրբր»)¹⁰։ Երևում է, որ նա էլ Բարսեղ Օրիի նման մի գործիչ է եղել։ Ամենահետաքրքրականը այն է, որ ինչպես պարզվում է «Մասեաց աղավնի»-ի հոգվածից, Հովսեփի էմինյանը, ութ տարի ապրելով մեր երկրում, գրել է իր գլխով անցածի պատմությունը և հրատարակել անգլերեն լեզվով Կալկաթայում¹¹։ Ահա այդ դիրքը գտնելը և նրա մեջ եղած տեղեկությունները հայերին մատչելի դարձնելը կլինեի մի մեծ ծառայություն, որ կմատուցվեր մեր պատմությանը։ Ես կարծում եմ, որ այս գործը դուք միայն կարող եք կատարել։ Ո՞վ գիտե, գուցե Հայկական ձեռնարանի գրադարանը ունի այդ գրքից։ Իսկ եթե չունենա, Ձեզ համար, կարծում եմ, հեշտ կլինի Ձեր եվրոպացի բարեկամների միջոցով գտնել նրանց մի որևէ գրադարանում, օրինակ Լոնդոնում։ Եթե ուղարկության արժանի համարեք այս բանը, եթե գտնեք հիշյալ գիրքը, դուք դրանով լուսաբանած կլինեիք XVIII դարի մեր պատմության մի նշանավոր և չափազանց հետաքրքրական շրջանը։ Եվ ես կասկած չունեմ որ Դուք Ձեր

սրտին մոտ կստնեք այս բանը, ինչպես որ ամեն մի հարց, որ վերաբերվում է մեր պատմության և զրականության, մոտ է Ձեր սրտին:

Խորին հարգանքներով Ձեզ շնորհապարտ՝

Ա. Բաբախանյան

3

1902, նոյեմբերի 7, Քիֆլիս

Մեծապատիվ պարոն
Գ. Խալաթյան

Ներողություն եմ խնդրում Ձեր նամակներին ուշ պատասխանելուս համար: Դուք ինձ շատ ուրախացրիք, հայտնելով, որ էմին Հովսեփյանի գիրքը կա Ճեմարանում: Թեև չեմ տեսել այդ գիրքը, բայց զգում եմ, որ նա մի գյուտ պիտի լինի մեր նոր պատմության համար: Եվ կարելի է ապահով լինել, որ այդ հիշատակարանը հայ ընթերցողի սեփականությունը կդառնա, քանի որ դուք հանձն եք առնում թարգմանել տալ նրան և տպագրել: Շատ ղեղեցիկ գործ, թե մենք ունենանք, ինչպես Դուք գրում եք, 200—250 ոտքի փող, իմ կարծիքով, այդ փոքրիկ դրամարը գտնելը դժվար չէ, կարելի է և բաժանորդագրություն բաց անել, կարելի է, վերջապես, դիմել մի քանի մարդկանց աջակցության: Ինձ թվում է, որ չպետք է կանգ առնել այդպիսի փոքրիկ խոչընդոտի առաջ, երբ հարցը մի ղեկավարի պատմական հիշատակարան թարգմանելու մասին է: Բայց ինձ անձամբ հուսահատեցնում է մի հանգամանք—Դուք գրում եք թե $1-1\frac{1}{2}$ տարվա ընթացքում կունենանք թարգմանությունը: Դա չափազանց երկար ժամանակ է ինձ համար: $1-1\frac{1}{2}$ տարուց հետո ես պիտի լինեմ XIX դարում, իսկ ինձ էմինի գիրքը հարկավոր կլինի ամենաշատը մի 7—8 ամսից հետո: Ինչպես ունենք, որ կարելի լինի ինձ համար էլ օգտակար դարձնել այդ պատմական աղբյուրը:

Պ. Տոնապետյանը¹, այո, ձեռնհաս է և կարող է լավ կատարել այդ գործը: Բայց չէ՞ր կարելի ավելի շուտ: Գլխավորը վարձատրության հարցն է, իհարկե: Բայց, ինչպես կամենաք, ես պատրաստ եմ անելու: Կամենում եք բաժանորդագրություն բաց կանենք, կամենում եք, մասնավոր դիմումներ կանենք, ինչպես էլ լինի, այդ դրամարը գտնել կարելի է, եթե ոչ. Տոնապետյանը այս պահից չափազանջն զրամ: Թողեք նա սկսե թարգմանությունը և մաս-մաս ուղարկե Ձեզ և երբ կհասնե կեսին, կամ երբ Դուք անհրաժեշտ կհամարեք, կսկսենք փողի մասին էլ մտածել և մաս-մաս կհասցնենք նրան: Այս բոլորիս ես չդիտեմ թե ում կարող եմ դիմել. բայց երևի ժամանակի ընթացքում կբացվի մի հարմար առիթ՝ դիմելու մեկին կամ մի քանիսին և դրամարը գտնե մաս-մաս ստանալու: Իմ կարծիքով ավելի լավ կլինի կամ մեկենաս գտնել. կամ ոչ. Տոնապետյանին փոխարինաբար վերցրած փողը տալ, իսկ հետո, երբ գիրքը կտպվի, կարելի կլինի հեշտությամբ ծախել Ձեր խոստացած 200—250 օրինակ զրքերը և դրանով ծածկել պարտքը: Ես Ձեզ խոսք եմ տալիս, որ ամեն կերպ կաջակցեմ և կհաջողեցնեմ գիրքը ծախելու:

Այս կոմբինացիաներից որը ցանկանում էք ընտրեցեք: Բայց ինչ վճիռ կայացնելու լինեք, խնդրեմ առաջ ու առտջ մտածեցեք ավելի արագ թարգմանել տալու մասին: Լավ կլինի, որ հենց այժմից ուղարկեիք գիրքը թարգմանելու համար: Եթե հարկավոր էք համարում, ես հենց այժմ մի հոգված կտպագրեմ «Մշակում» էմինի և նրա պրի մասին²: Պատմելով հրատարակության բոլոր հանգամանքները և խորհուրդ տալով, որ ուղարկություն դարձնեն այն, ինքնըստինքյան չնչին արգելքի վրա, որ թույլ չէ տալիս հրատարակել այդ պատմական հիշատակարանը:

Ստացա Ձեր ուղարկած երկրորդ ծրարը գրքերով, անշափ շնորհակալ եմ Ձեր բարի ուղարկության համար: Շատ հետաքրքրական էր ինձ համար մանավանդ Ճեմարանի դրացուցակը, ուր գտա մի բանի՝ ինձ հարկավոր գրքեր: Հույս ունեմ, որ ժամանակին Ձեր լուսավոր աշակցությամբ, հնարավորություն կունենամ օգտվելու այդ գրքերից:

Ինձ համար շատ հետաքրքրական կլինեք իմանալ, թե Դուք ինչ կարծիք ունիք պ. Ստ. Մալխասյանի այն առաջարկության մասին, որ տպվեց «Մշակում», այն է՝ հայ պատմագիրների գլխավոր հրատարակության մասին³: Ձեր կարծիքը խնդրում եմ անձամբ ինձ համար միայն, և առանց Ձեր թույլտրվության ոչ ոքին չեմ հայտնի: Այս բոլորին Թիֆլիսում շատ են խոսում այդ առիթով: Ուստի շատ ցանկալի է լսել Ձեր հեղինակավոր կարծիքը:

Նորից խնդրելով բնորոշել իմ խորին շնորհակալությունը,

մնում եմ անկեղծ հարգանքով՝

Ա. Բարսեղյան

4

1902, նոյեմբերի 14, Թիֆլիս

Մեծապատիվ պարոն

Գ. Խալաթյան

Պ. Տոնապետյանի նամակը ավելի ևս գրգռեց իմ հետաքրքրությունը, մի բանի օր առաջ Ձեզ նամակ գրեցի. այժմ էլ նորից գալիս եմ Ձեզ խնդրելու, որ իսկույն սկսել տաք թարգմանությունը: Պ. Տոնապետյանը փոքր-ինչ խոստուն լեզու ունի: Եթե նա աշխատե միանգամայն պարզ ու մատչելի արևելյան բարբոտով թարգմանել, ես հավատացնում եմ, որ էմինի գիրքը վեպի պես կկարդացվի և լավ կտարածվի: Ասպհով կարող եք լինել, որ թարգմանության վարձը վաճառված օրինակներից կարող ենք հանել, բայց եթե դուք ապահովություն չեք համարում այդ, կարող եք բաժանորդագրություն բաց անել:

Ես վճռել եմ մի մանրամաս հոգվածով ծանոթացնել «Մշակի» ընթերցողներին էմինի և նրա գործի հետ, պատմելով և Ձեր մասնակցությունը թարգմանության գործի մեջ: Համաձայն եք: Թույլ կտա՞ք ինձ կտորներ բերել պ. Տոնապետյանի նամակից: Խնդրեմ հաղորդեցեք, թե ի՞նչ կարող եմ գրել Ձեր կողմից: Կարդացի պ. Տոնապետյանի նամակը իմ ծանոթների շրջանում, հետաքրքրությունը շատ մեծ էր, հավատացած եմ, որ ընթերցող հասարակությունն էլ վառ հետաքրքրությամբ կվերաբերվի այդ գործին:

Եթե ինձ հաղորդեիք տեղեկություններ և Ձեր նոր աշխատության մասին

(խորենացու քննադատությունը)¹, շատ շնորհակալ կլինեի: Տեղեկություն խնդրում եմ հրատարակելու համար:

Խորին հարգանքով Ձեր անձնով՝

Ա. Բարախանյան

5

1963, ապրիլի 24, Ռիֆլիս

Մեծապատիվ պարոն

Գրիգոր Խալաթյան

Երկար ժամանակ գլուխս սաստիկ խառնված էր և ես չկարողացա նամակ գրել Ձեզ և հարցնել, թե ինչ եղավ ու. Տոնապետյանի թարգմանությունը: Խնդրեմ մի երկտողով ինձ իմաց անե՞ք՝ հո մոռացության չե՞ք տվել այդ կարևոր գործը: Ես սպասում եմ նրան: Պ. Լևոն Մարգսյանին¹ խոսք եմ տվել այս տարի տալ «Լուրձին» իմ «Հայկական տպագրության» շարունակությունը², այժմ նա ստիպում է որ տամ, բայց ես չեմ կարող սկսել առանց էմիլի հիշատակարանի: Ինձ համար շատ կարևոր է իմանալ, թե որքան շուտ կլինի թարգմանությունը և արդյոք թարգմանվո՞ւմ է նա այժմ: Շատ խնդրում եմ Ձեզ, որ նեղություն կրեք մի թեթև տեղեկություն տալ ինձ: Պ. Տոնապետյանի նամակները ուղարկում եմ նամակիս հետ:

Այժմ մի ուրիշ խնդրանք: Գնելով «История мусульманства»³ գիրքը, ես նրա շապկի վրա տեսա մի շարք հետաքրքրական գրքերի անուններ, որոնց հրատարակել է Լադարյան ձեռնարանը: Ինչո՞ւ այդ գրքերից չեք ուղարկում խմբագրություններին: Արևելագիտության վերաբերյալ աշխատություններ են դուրս գալիս, իսկ մենք, արևելցիներս, ոչինչ չգիտենք: Ինձ թվում է թե կարող ենք օգուտներ շատ քաղել այդ գրքերից: Եվ ես խնդրում եմ Ձեզ, որ եթե կարելի է, ուղարկել տաք այդ գրքերից մեր խմբագրություն. իսկ եթե չէ կարելի արդ իմ անունով ուղարկել տաք վերադիր վճարով հետևյալ գրքերը. Крымский⁴ «К истории 1001 ночи»⁵; Лекции по корану⁶; Лекции по истории Ирана⁷; Семитские языки и народы. Нельдеке⁸ и Образчики персидской письменности с X века до нашего времени⁹.

Ի վերջո նորից խնդրում եմ շնորհակալ էմիլին: Ձեր գիրքը¹⁰ այժմ երևի տպվել վերջացել է: Սպասում ենք մեծ հետաքրքրությամբ:

Խորին հարգանքով՝

Ա. Բարախանյան

6

1963, դեկտեմբերի 12, Ռիֆլիս

Հարգելի բարեկամ

Գրիգոր Արամովիչ

Ո՞ր ժամանակից է որ չենք տեսնվել իրար հետ: Ինձ մի ամբողջ անհունություն է թվում, երբ մտաբերում եմ ամառը և այն բոլորը, ինչ անցան իմ գլխով հանքային ջրերից հետո... Հիվանդացա սաստիկ կերպով, այժմ էլ հի-

վանդ եմ, բայց գոնե այնքան լավ եմ, որ կարողանում եմ տանից դուրս գնալ, պարապել: Ես միշտ հիշում էի Ձեր խոսքերը, թե չպետք է շատ էլ հպատակվել բժիշկներին: Երևակայեցեք, քիչ էր մնում, որ համոզվեի և իմ բժիշկները՝ թե ես ստամոքսի ըձԿ ունիմ, բարերախտաբար, գտնվեց մի ուրիշը, որ գտավ կատար և մինչև այսօր բժշկում է այդ հիվանդությունից, թեև ոչ մեծ աջողություն մը: Գործադրել է իր իմացած բոլոր միջոցները, նույնիսկ էլեկտրականություն, բայց դեռ բան չէ լինում:

Երկա՛ր, շատ երկար կլինե՞ր բոլորը պատմելու Թողնենք, անձնապաշտություն մը բան չի լինի, պետք է ի վերջո համակերպվել այն մեծ ճշմարտությանը, թե մի օր ծնվել ենք, մի օր էլ կմեռնենք...

Ստացել եմ Ձեր ուղարկած բոլոր բաները, Հովսեփ էմինը, որից անհամեմատ ավելի հաճելի էր Ձեր պատկերը՝ ինձ համար այնքան սիրելի հիշատակներ հարուցանող Ձեր մականորոթյամբ, «Армянские Аршакиды»-ն¹, որի դեռ մի մասն եմ կարդացել մեծ հաճությամբ:

Նախ էմինի մասին մի քանի խոսք ասեմ: Պ. Տոնապետյանը ինձ գրել էր Լոնդոնից, որ տեսնվել է Ձեզ հետ և դուք ասել եք, թե թարգմանության ծախսերը ես պիտի հոգամ: Ժիշտ է, հարգելի բարեկամ, այդպիսի խոստում տվել եմ Ձեզ, բայց Դուք ինձ գրել էիք, թե վարձատրության բավարար կլինի մի 200 րուրլի: Մինչդեռ պ. Տոնապետյանը պահանջում է... 650 րուրլի: Այդ թվանշանը հառաչանք պատճառեց ինձ, ոչ թե այն պատճառով, որ ես շատ եմ համարում այդ վարձատրությունը, — քաղ լիցի, այլ որովհետև անհնարին է գտնել նրան, ճարել: 200 րուրլու համար դեռ կարելի էր դիմել մի ևրկու-երեք մարդու, ինչպես, բայց 650 րուրլի — մի այնպիսի գումար է, որ երբեք ինձ չի աջողվի հավաքել: Այս պատճառով ստիպված եղա համաձայնել Լեոն Սարգրսյանի առաջարկության, այն է՝ օգտվել զրբի ամենահամառոտ բովանդակությամբ, թողնելով այն վերին աստիճանի հետաքրքրական տեղեկությունները, որոնք ինձ շատ հարկավոր էին իմ զրբի համար: Ինչպես կտեսնեք «Մուրճից»², ես բավականացել եմ էմինի համառոտ կենսագրությունը բերելով: Բայց մի՞թե երբեք չպիտի թարգմանվի էմինի զեղեցիկ գիրքը, դա կուրսուտ կլինի մեր պատմական զրականության համար:

Մրցանակ հայտարարեցիք ո. Մեսրոպի կենսագրության համար³: Եթե հիշում եք, ես Պյատիգորսկում Ձեզ ասացի, որ ես էլ մտադիր եմ մասնակցել այդ մրցանակին: Բայց այժմ տեսնում եմ, որ իմ ուղած բանը չէ դա: Նախ և առաջ, շատ չնչին է վարձատրությունը, որովհետև դուք ի նկատի եք ունեցել միայն փոքրիկ ծավալով գիրք: Ես վաղուց էի ծրագրել Մեսրոպի կենսագրությունը և Ձեզ էլ առիթ ունեցա հայտնելու, որ կարևորը Մեսրոպի մասին մնացած մի քանի հատուկ տեղեկությունների կրկնությունը չէ, այլ պետք է ընթերցողի առաջ բաց անել նրա գյուտի ամբողջ պատմական և կուլտուրական նշանակությունը: Ահա այդ ծրագրով էլ ես այժմ գրում եմ ս. Մեսրոպի պատմությունը, որ համարյա վերջանալու վրա է: Աշխատությունը բավական մեծ է դուրս գալիս (այժմ չեմ կարող ասել թե քանի թերթ կլինի), որովհետև ես նկարագրել եմ այն, ինչ ունեինք մենք Մեսրոպից առաջ և այն հետևանքը, որ ունեցավ տառերի գյուտը: Կարծում եմ, որ ինձ աջողվել է պատկերացնել մեր հին պատմության մի քանի էջերը (հեթանոսական դարից, չորրորդ դարը՝ իբրև մրցություն հեթանոսության և քրիստոնեության մեջ և հինգերորդ դարը՝ իբրև քրիստոնեության կուլտուրայի հաղթանակ): Հիմա չգիտեմ, կարո՞ղ եմ

աշխատությունն ուղարկել Ձեզ թե ոչ. ինքս տպագրելու ոչ մի միջոց չունեմ և դրել եմ, հույս ունենալով, թե մրցանակի կամ այլ հրատարակչական ձեռնարկության աջակցությունը կգտնեմ: Խնդրում եմ չզրանաք Ձեր խորհուրդը տալ ինձ այս մասին: Ձեզ համար, իհարկե, հետաքրքրական կլինի և այն, որ պատրաստում եմ և «Անին»³. ծրագրած ունիմ մի շքեղ պատկերազարդ հրատարակություն, բայց թե ինչպես պիտի կարողանում հրատարակել—այդ մասին չեմ էլ դեռ մտածել:

Ինչպես խոստացել էի, ահա ուղարկում եմ Ձեզ փոխարինապես իմ լուսանկարը:

Անկեղծ սիրալիւ ողջույններով

ՉԵՐ Ա. Բարախանյան

7

1904, փետրվարի 15, Թիֆլիս

Սիրելի բարեկամ
ալ. Խալաթյան

Ձեր հեռագրին չպատասխանեցի ոչ թե այն պատճառով, ինչպես ենթադրում եք, որ չեմ ստացել, այլ որովհետև ուզում էի դեռ վերջացնել «Մեսրոպ» և հեռագրել Ձեզ թե ուղարկեցի: Տարաբախտաբար, չկարողացա այդպես անել, ձեռագիրը, երևի, դեռ մի շաբաթ էլ դուցե և մի քանի օր էլ ավել կմնա իմ ձեռքին, որպեսզի մի քանի փոփոխություններ և հավելումներ մտցնեմ: Վերջացնելուն պես իսկույն կուղարկեմ Ձեզ:

Ձեր դրած պայմանները կարդացի և նրանց մասին ոչինչ չեմ ասի: Դործը կավարտեմ, կուղարկեմ Ձեզ, կկարդաք, կտեսնեք և ինչ ուզում եք կանեք: Միանգամայն Ձեր տրամադրության տակ եմ զնում, Ձեր ազնիվ բարեկամական զգացմունքը ղեկի ինձ շատ և շատ բավական է, որ ես ամեն ինչ Ձեզ թողնեմ, մանավանդ բովանդակության մասին Ձեր հեղինակավոր կարծիքը հայտնելը, պարտա կհամարեմ ենթարկվել միայն Ձեր կարծիքին, այնքան հարգում եմ և բարձր եմ դասում նրան: Առայժմ այսքան: Շտապով արտագրում եմ որ որքան կարելի շուտ հասցնեմ Ձեզ:

Առանց Ձեզ հիշեցնելու ես օգտվել եմ Ձեր «Армянские Аршакиды»-ից ամենից առաջ Մեսրոպի մահվան թվականը այնտեղից եմ վերցրել և իմ աղբյուրների մեջ հիշված է նաև Ձեր այդ աշխատությունը, որ կարդացել եմ ծայրեծայր. անողորմ քննադատություն է... Երանի թե մեր պատմության մյուս շրջաններն էլ այդպես լուսարանվեին, մեր մյուս մատենագիրներն էլ (օրինակ՝ Փավստոսը, Եղիշեն, Ղազարը) այդպիսի մանրամասն քննադատության ենթարկվեին, որ կամ ապացույցաներ նրանց անպայման վստահելի լինելը, կամ ցույց տաք, թե ինչ մասերի մեջ են նրանք վստահելի և ինչ մասերի մեջ— ոչ: Մովսես Խորենացուն V դարի մեջ գնելը այլևս անկարելի պիտի լինի, և դուր կտեսնեք, որ ես Սահակ-Մեսրոպյան աշակերտների թվում նրան ոչ մի տեղ չեմ նշանակել: Իմ կարծիքով, այսուհետև պետք է ցույց տալ և Խորենացու դրական կողմերը, այսինքն թե ինչ տեղում կարելի է նրան հա-

վատալու ներկա դրության մեջ նա չարդուփշուր եղած է, տրորված, բայց մի՞թե այդ բեկորների մեջ չկան այնպիսիները, որոնք պիտանի կլինեն մեր պատմության համար։ Անկարելի է որ չլինեն¹։

Ի դեպ, Կորյունն էլ իմ մեջ կասկածներ հարուցեց։ Տառերի դյուտը նա նկարագրում է այնպես մակերեսաբար, այնքան մոթ ակնարկներով և ընդհանուր բառերով, որ հազիվ թե դա մի ականատեսի նկարագրություն լինի։ «Հանդես ամսօրյա»-ի մեջ էլ մի այդպիսի կասկած կա հայտնված²։

Սրտանց շնորհավորում եմ Ձեր նոր գիտական աստիճանը³։ Միայն Ձեր նամակից իմացա, հետո կարդացի և «Հանդես ամսօրյայի» մեջ։ Ամբողջ Պետերբուրգում չգտնվեց մի հատ հայ, որ լուր տար «Մշակին»։ Ճարահատված «Հանդեսից» վերցրինք։ Զարմանալի է, Մալխասյանը խոռովել է «Մշակից» և չէ գրում Ձեր աշխատության մասին։ Ուրիշ մասնագետ չունենք։ Գուցե ես էրեմ, բայց ես կարող եմ միայն բովանդակությունը ծանոթացնել, առանց քննադատելու Ձեր ապացույցները, մի բան, որի համար պետք է լավ պատրաստված լինել։

Ըմ հիմնագությունը տակավին շարունակվում է, թեև ահա հինգ ամիս է, ինչ անդադար բժշկվում եմ։ Ձեր համակրական տողերը ինձ սաստիկ հուզեցին։ Շնորհակալություններ հոգուս խորքից, սիրելի բարեկամս։ Շատ նեղություններ եմ կրել և կրում էլ եմ այժմ, բայց այդպիսի վերաբերմունքը դեպի իմ համեստ գործունեությունը ինձ մոռացնել է տալիս ամեն ինչ։ Ըմ մասին տարածված լուրերը⁴ ոչինչ հիմք չունեն, և ես զարմանում եմ, թե ինչպես կարող էր ստեղծվել մի այդպիսի սուտ, որքան էլ անհավանականություն չլինի նրա մեջ։ Նույնիսկ Վիեննայից Միխայիլյանները հայտնել էին թե ճիշտ է։

Անին միշտ հետս է, միշտ մտքիս մեջ։ Ունիմ արդեն նկարագրության ուրվագիծը. «Մեսրոպը» վերջացնելուն պես, պիտի սկսեմ։ Եվ եթե հրատարակել կարողանամ (ես վճռել եմ—կամ հրատարակել չբեղ, կամ չհրատարակել), պիտի նվիրեմ Ձեզ, որովհետև եթե ամառը դուր չգայիք հայրենիք, ես չպիտի տեսնեի Անին։ Եվ ոչ միայն Անին, այլև մեր մյուս անդին սրբությունը—Օշականը⁵։

Շատ լավ կլիներ, եթե պ. Տոնապետյանը շարունակեր իր թարգմանությունը. ինչպես էլ լինի, պետք է տպագրել այդ գիրքը։ Լևոն Սարգսյանի պահանջներին դիմելով, ես օգտվեցի այստեղ կատարված համառոտությունից. ինքս էլ գոհ չեմ, մանրամասնությունները անհայտ մնացին ինձ, մինչդեռ մանրամասնություններն են անհրաժեշտ նյութերը։

Ի՞նչ դրության մեջ է Ձեր հրատարակչական ձեռնարկությունը⁶։

Ընդունեցե՛ք բյուրավոր սիրավոր ողջուններս՝

Ձեր Ա. Բարախանյան

Հարգելի բարեկամ

ա. Խաչատրյան

Ստացա աշխատությունս¹ և Ձեր նամակը։ Ամենից առաջ շտապում եմ հայտնել Ձեզ, որ աշխատությունս մասնավոր կերպով ցույց տվի գրաքննիչին և նա հաստատ խոսք տվեց, որ թույլ կտա տպագրելու։ Այժմ ձեռագիրը շտա-

պով արտադրել եմ տալիս և հույս ունեմ, որ մի քանի օրից հետո կներկայացնեմ ցենզուրային և պաշտոնական թույլտվություն կստանամ: Այս կողմից, ուրեմն, կարող եք միանգամայն ապահով լինել:

Ապա զալիս եմ իմ շնորհակալությունը հայտնելու Ձեզ այն ուշադրության համար, որ դարձրել եք աշխատությանս: Ստանալուն պես ես, իհարկե, ամենայն հետաքրքրությամբ սկսեցի Ձեր նկատողությունները աչքի անցկացնել: Բայց ես նախ մի քանի խոսք կասեմ հանձնաժողովի որոշումների առաջին կետի վերաբերմամբ: Ինձ առաջարկվում է լրացնել ու բարեփոխել լուսավորչին (մասամբ և ներսեսին ու Սահակին) վերաբերյալ մասերը: Ես նորից կարդացի աշխատությունս և, անկեղծորեն ասած, չգտա լուսավորչին և նրա տոհմը նսեմացնող, սովերի մեջ պահող ուղղություն: Ընդհակառակն, ամբողջ Դ դարի կուլտուրական և առաջադիմության շարժումը ես լուսավորչի տոհմի մեծ ջանքերի գործն եմ համարել, իսկ Մեսրոպի և առհասարակ մեր դրականության դյուտի և դարդացման գործը անվանել եմ մի անհրաժեշտություն, որ լուսավորչի տոհմի դարավոր պայքարներից և ջանքերից [է] պատրաստված: Ժիշտ է, ես ասում եմ, որ լուսավորչի և ներսեսի հսկայական ջանքերը մեծ արդյունքներ չտվին, քանի որ չկար հայկական դրականություն, բայց սա մի փաստ է, առանց որի հաղիվ թե կարողանաք քրիստոնեության անհաստատ, երերուն դրության գլխավոր պատճառներից մեկը գտնել:

Լուսավորչի կենսագրությունը ես չեմ գրել ոչ միայն այն պատճառով, որ նա իմ ծրագրից դուրս էր, այլ և, ի նկատի ունենալով ներկա հանգամանքները: Դուր, իհարկե, շատ լավ գիտեք, որ ներկայումս պատմություն գրողը այլևս չէ կարող կուրորեն հետևել Ազաթանդեղոսին, երբ պատմության քննադատությունը պնդում է թե Դրիգորը հույն էր: Եվ իրավ, նրա և նրա ժառանգների գործունեությունը, ոգին այդ միևնույնն է ապացուցում: Մանրամասնորեն խոսել Դրիգոր լուսավորչի մասին առանց հիշատակելու այս հանգամանքը՝ ես չէի կարող, քանի որ ժողովրդական գրվածքի մեջ ես անհարմար համարեցի այդպիսի բան մտցնել, աչքի առաջ ունենալով մեր ներկա եկեղեցական դրությունը: Բացի դրանից իմ գրքի մեջ ես քրիստոնեությունը չեմ վերցրել իբրև կրոնական հաստատություն, այլ նայել եմ նրան իբրև կուլտուրական-քաղաքական հիմնարկություն: Իսկ այս տեսակետից Դրիգոր լուսավորչի, ներսես Մեծի մասին չեմ կարծում թե կարելի լինի ասել ավելին, քան ես եմ ասել: Ինչ վերաբերվում է Սահակին, ես աշխատել եմ միջին ճանապարհ բաց անել կորյունի և Փարպեցու մեջ. մեկը ամեն ինչ Մեսրոպին է հատկացնում, մյուսը—Սահակին: Ես Սահակի մասին այնքան շատ եմ խոսել, այնքան նրա բարեմասնություններով եմ զբաղվել, որ թվում է թե աշխատությունը ավելի Սահակի կենսագրությունն է:

Այսպես ահա, ես որքան մտածում եմ, չեմ կարողանում գտնել թե ինչ կարող եմ ավելացնել և ինչով բարեփոխել, չզավաճանելով ուղղությանս և կազմած հայացքիս: Ամենաշատը, որ կարող եմ անել այն կլինի, որ թեթև սրբագրություն կմտցնեմ այդ մասերի մեջ:

Ձեր նկատողություններից շատերը աչքի առաջ կունենամ. ամենահիմնավորը Անտոնիոսին վերաբերյալն է. բայց մի քանի տեղերում ես չեմ կարողանում մի հայտնի վճռի հասնել: Որինակ, դուր Ուրարտյան երկրի Դրած արշավանքը համարում եք եղած ոչ Արեւելքից և ցույց եք տալիս Լրնորմանը², բայց ես Մասսկերոյից³ եմ օգտվել, որ պարզապես ասում է թե սակերի ար-

շավանքը Կասպից ծովի հարավային ափերով տեղի ունեցավ: Նույն Մասպերոն ասում է, թե հայերի շարժումը Արևմուտքից դեպի Արևելք սկսվեց վեցերորդ դարում, իսկ Արարսի ավազանում նրանք հաստատված են չորրորդ դարի սկզբում: Ես այդպես էլ դրել եմ: Զրադաշտի մասին նորագույն հետազոտություն անողները ասում են թե 1400 տարի ք. ա. է նա ապրել. համենայն դեպս սա կարևոր չէ, բանի որ Զրադաշտը իսկապես կենսադրություն չունի: Աբադաղի սուրբ լինելը հաստատ է: Դուք հարցական եք դրել այստեղ, որ ես ասում եմ թե վեցերորդ դարում հայերը աստատվելուց հին Պարսկաստանի դեմ: Բայց այսպես է ասում Դարեհի արձանագրությունը:

Որովհետև շատ են Ձեր հարցականները, ուստի բոլորին պատասխանել չի լինի: Կասեմ այնքան, որ ես ի նկատի կունենամ Ձեր յուրաքանչյուր նկատողությունը և նորից կհամեմատեմ աղբյուրների հետ ու կուղղեմ: Պարսկական ազդեցության մասին խոսելիս՝ ես նայել եմ Ձեր «Արмянский эпос»-ին¹: Դուք ինքներդ էլ բնորոշում եք, որ հին հայոց կրոնը իրանական էր: Մի խոսքով, ես թանկագին եմ համարում Ձեր ցուցմունքները՝ նորից իմ աշխատությունը վերադնահատելու համար: Ես Ձեզ հետո կգրեմ, թե ինչ արի այդ ցուցմունքներով: Իմ աշխատությունը Ձեր ցույց տված դիրքով (Ստ. Նադարյանց²) և տառերով կկազմե մոտավորապես 10 տպագրական թերթ (320 երես): Այս հաշվով վարձատրությունը ինձ տրվում է թերթից մոտ 37 բուրլի (Ձեր նշանակած գումարից դուրս եմ հանում 25 ր. արտադրման և 50 ր. սրբագրության վարձ), դա մի չափավոր վարձատրություն է, ի նկատի ունենալով տպվելիք օրինակների թիվը—3600: Դուք հայտարարել էիք 3 թերթից ոչ պակաս, վարձատրությունը 150 բուրլի: Սրանով ես*:

9

1904, հունիսի 26. Թիֆլիս

Հարգելի բաբեկամ
պ. Խալաթյան

Օր ու գիշեր շտապելով և շտապեցնելով աշխատում էի շուտ վերջացնել «Ս. Մեսրոպի» տպագրությունը, որպեսզի կարողանամ ժամ առաջ ազատվել այստեղի շոգերից և գնալ բժշկվելու: Սակայն ջանքերս այնքան աջողվեցին, որ այժմ էլ դեռ Թիֆլիսում եմ, բայց գո՛հ եմ, որ գիրքը վերջացավ և ես կարող եմ գոնե այժմ ճանապարհվել հանրային ջրեր:

Գրքերը պատրաստ են տպարանում, ամեն մանրամասնություն դրեցի ու. Մատուրյանցին¹, խնդրելով կարգադրել՝ թե ուր պետք է ուղարկվեն զրբերը: Գրել եմ և այն, որ ավելի լավ կանեք եթե զրբերի վաճառումը հանձնեք «Հուտենրերդ» վաճառանոցին: Պետք է շտապ կարգադրել, որպեսզի զրբերը հանձնվեն վաճառանոց: Ես, համենայն դեպս, հանձնեցի այստեղի երկու վաճառանոցներին—«Կենտրոնական» և «Հուտենրերդ» 50-ական օրինակ:

* Նամակն այստեղ բնագրված է:

Այսօր ևս ճանապարհվում են Պյատիգորսկ. հանձնելի են «Հերմես» տպարանի կառավարիչ պ. Ե. Թոփչյանին (Ձեր հայրենակցին), որ կատարե այն բոլոր կարգադրությունները, ինչ կանե պ. Մատուրյանը գրքերի մասին:

Բոլոր հաշիվները ուղարկեցի պ. Մատուրյանին, որովհետև երկու անգամ գրել էր, որ ուղարկեմ, բայց հաշիվը, որ ևս կաղմել են ըստ Ձեր նամակի ռուսերեն լեզվով, Ձեր անունով է: Ընդհանուր ծախսը այդ հաշվով դուրս եկավ 848 ռուբլի: Թեև գրել էի Ձեզ, որ 800 ռուբ. մաքսիմալ դին է, բայց որքան աշխատեցի շաշողվեց այդպես անել: Պատճառները մի քանիսն են, նախ և առաջ գիրքը իմ հաշված 320 երեսի փոխարեն դուրս եկավ 344 երես: Երկրորդ՝ կարելի չեղավ այնպիսի թուղթ գտնել, որ 32 երեսը միանգամից տալի, ստիպված եղանք 16 երեսով տպել: Այնպես որ յուրաքանչյուր տպագրական թերթ (32 երես) մեքենայի վրա 7200 անգամ է տպվել: Այս հաշվով դուրս էլ կնկատեք, որ 26 ռուբլին, իբրև շարվածքի և տպագրության դին, շատ շահավոր է, նույնիսկ անձեռնտու՝ տպարանի համար: Երրորդ՝ բրոշյուրները ևս սխալմամբ հաշվել էի 1½ ռուբլի հատին, մոռանալով, որ այդպիսի դնով արած բրոշյուրը առանց կարելու է լինում: Ոչ մի տեղ չկարողացան 3 կուպկից էժան գնով կարած բրոշյուր անել տալ: Զորրորդ՝ շապկի տպագրությունը և թուղթը իմ կարծածից քիչ, բայց շատ քիչ, ավել նստեց:

Հարցնելով պատճառները ևս, այնուամենայնիվ. խոստովանում եմ, որ, տալով Ձեզ ոչ բոլորովին ճիշտ նախահաշիվը, պատճառ եմ դարձել, որ դուր սխալ զաղափար եք կաղմել գործի մասին, մի բան, որ կարող էր ազդել Ձեր վճռի այս կամ այն կետի վրա: Ուստի ևս ամենայն ուրախությամբ համաձայն եմ, որ 800-ից ավել անցած դումարը, ուրեմն 48 ռուբլին, դուրս գաք իմ վարձատրությունից:

Ձեզանից ստացել եմ 500 ռուբլի, պ. Մատուրյանն էլ ուղարկել է 500 ռուբլի: Բոլոր ծախսերը տալուց հետո ինձ մնաց 152 ռուբլի: Դրանով չէր կարելի ջրերը զնալու և բնտանիքիս գրությունը ապահովելու մասին մտածել: Ես պարտք վերցրի մի դումար և ահա գնում եմ, հուսալով, որ վերադառնալուց կստանամ Ձեզանից և կվճարեմ պարտքս:

Գրքի դինը, պ. Մատուրյանի հեռագրի համաձայն, նշանակվեց 75 կուպկի, որ թանկ չէ:

Պյատիգորսկում ևս կսպասեմ Ձեր նամակին, հասցես անցյալ տարվանն է՝ Верхний бульвар. Д-ру В. М. Арцруни, հանձնել ինձ:

Առ այժմ վերջացնում եմ նամակս ամեն աջողություն ցանկալով «Սահակ-Մեսրոպյան մատենադարանին»², որի № 1-ը իմ աշխատությունը պատիվ ունեցավ դառնալու: Այսօր, երբ ճանապարհվում եմ իմ քայքայած առողջությանը ճար որոնելու, չեմ կարող նորից և նորից իմ լիաբերան շնորհակալությունը չհայտնել Ձեզ: «Սահակ Մեսրոպյան մատենադարանի» առաջին գործը դարձավ մի հիմնական գրողի օգնելը. առանց այդ օգնության՝ ևս մտածել անգամ չէի կարող բժշկության մասին: Բոլոր շնորհակալություններ, սիրելի բարեկամ:

Մնամ Ձեր անձնվեր՝

Ա. Բարախանյան

1908, հոկտեմբերի 6, ժընև

Հարգելի բարեկամ
Գրիգոր Արամովիչ,

Ինչպես տեսնում եք, այժմ ես գտնվում եմ Շվեյցարիայում: Եկել եմ այստեղ բժշկվելու համար և, ինչպես երևում է, դեռ բավական պիտի ուշանամ: Վճռել էի վերադարձիս մտնել Մոսկվա, բայց այժմ տեսնում եմ, որ վերադարձս ձմեռը պիտի լինի, և ես անկարող կլինեմ գալ Ձեզ մոտ: Ուստի դիմում եմ Ձեզ, իբրև իմ ուշադիր և սիրալիր բարեկամին:

Բանն այն է, որ ես Ձեզանից լսել եմ թե լազարյան տոհմի նամակագրությունները գտնվում են Ճեմարանում և մտադրություն կա նրանց հրատարակելու: Մինչև այժմ հրատարակությունը չտեսանք և երևի շուտով էլ չենք տեսնի: Դուք անշուշտ լսած կլինեք, որ ես պատրաստել եմ մի շատ ընդարձակ աշխատություն—Հայոց պատմության ԺԶ դարից մինչև մեր օրերը¹: Առաջին հատորը, որ բաղկացած է ավելի քան 1200 երեսից, միանգամայն պատրաստել էի տպագրության հանձնելու, բայց այս արտասահմանյան ճանապարհորդությունը պատճառով եղավ լրացնելու ձեռագիր աղբյուրների պակասության մեծ մասը: Վիեննա և Վենետիկ շատ բան գտա և վերցրի: Այստեղից բանակցություններ եմ վարում Պոլսի և Երուսաղեմի հետ և ապահով եմ, որ այդ տեղերից էլ կստանամ հարուստ նյութեր, այնպես որ կարող կլինեմ առնել թե շատ լայն չափերով շահագործել եմ ձեռագիր, ոչ մի տեղ չհրատարակված նյութեր:

Նկատի ունենալով այն խոշոր դերը, որ կատարել են լազարյանները մանավանդ ԺԶ դարի մեր պատմության մեջ, ես մեծ հույս ունեմ թե նրանց գրություններն էլ կտան ինձ շատ թանկագին նյութեր: Էջմիածնում ես գտա լազարյանների նամակների մի մեծ ժողովածու, որ, սակայն, վերաբերում էր XIX դարին: Իսկ ինձ առայժմ հետաքրքրում է XVIII դարը, որով վերջանում է իմ առաջին հատորը: Մեր կաթողիկոսները, մելիքները, Հովսեփ Արղությանը շարունակ նամակագրություն են ունեցել լազարյանների հետ իրանց ժամանակի քաղաքական դեպքերի մասին: Ահա դրանք են ինձ հարկավոր: Եվ ես Ձեզ շատ խնդրում եմ, հարգելի Գրիգոր Աբրամովիչ, զոհեցեք Ձեր թանկագին ժամանակի մի մասը թեթևացնելու Ձեր բարեկամի վրա ընկած ծանրությունը, եթե կարելի է աչքի անցկացրեք նամակագրությունների ժողովածուն, որոշեցեք պատմական նշանակություն ունեցողները և արտագրել տվեք ինձ համար: Հավիտյան կպարտավորեցնեք ինձ: Առ այժմ նկատի առեք միայն մինչև 1802 թվականը եղած նամակները և ուրիշ գրությունները: Արտագրության ծախսը ես կուղարկեմ մեծ շնորհակալությամբ:

Հարկավոր է նմանապես և Հովսեփի էմինի գիրքը, որ զժբախտաբար, չկարողացանք մինչև այսօր թարգմանել տալ և հրատարակել: Արդյոք Մոսկվայում չէ՞ր կարելի թարգմանել տալ (կարելի է ուսերենից) այն կտորները, ուր նկարագրված են էմինի ճանապարհորդությունները Հայաստանում: Խընդ-

քում եմ այս հարցի մեջ էլ նպաստեք ինձ Ձեր խորհուրդներով և աջակցությամբ, որոնց երբեք չեմ զլացել ինձ:

Իմ հասցեն է. Genève, 29, Roseraie, A. Babakhanian.

Ապասելով Ձեր պատասխանին,

Մնում եմ Ձեր Ա. Բաբախանյան

11

1909, նոյեմբերի 16, Քիֆիս

Հարգելի բարեկամ

Գրիգոր Աբրամովիչ

Վենետիկի Մխիթարյանները ձեռնարկել են հրատարակելու «Գեղունի», Ադանայի հալ ուրբերի օգտին¹: Այդ ժողովածուի մեջ պիտի մասնակցեն օտարազգի հայագետներ և դրանց գրվածքները պիտի տպագրվեն այն լեզվով, որով նրանք գրում են:

Խմբագրությունը ինձ գրել է, որ «Գեղունի» առաջին գրքի համար մի հոդված խնդրեմ պ. Վեսելովսկուց²: Եվ որովհետև ես չգիտեմ պարոնի հասցեն, ուստի դիմում եմ Ձեզ. բարի եղեք, հարգելի բարեկամ, հասցնելու պ. Վեսելովսկուն Մխիթարյանների այս խնդրանքը: Հոգվածը հարկավոր է շատ շուտ, որովհետև ժողովածուի տպագրությունը արդեն սկսվել է: Մեծ բան չպիտի լինի գրվածքը, և ցանկալի է, որ արտագրված լինի պարզ, որպեսզի կարողանան ռուսերեն անսխալ շարել և տպել Վենետիկում: Եթե պ. Վեսելովսկին համաձայն լինի մասնակցելու այդ բարեգործական ձեռնարկության, թող իր հոդվածը ուղղակի ուղարկե Վենետիկ, հայր Մ. Բուդուրյանին³:

Թույլ եմ տալիս ինձ խնդրելու, որ Ձեր թանկագին ժամանակից մի քանի րոպե զոհեք և ինձ հայտնեք Վեսելովսկու պատասխանը: Հասցես նույնն է. Тифлис, Соломоновская ул., № 14.

Անրիվ սիրալիւ ողջունեմքով՝

Ձեր Ա. Բաբախանյան

12

1910, ապրիլի 11, Քիֆիս

Հարգելի բարեկամ Գրիգոր Աբրամովիչ

Ես այդպես էլ կարծում էի, որ մի թյուրիմացություն կա: Ձեր հեռագիրը ցույց տվեց, թե որքան ես սխալված եմ եղել, կարծելով թե մոռացած եք եղել ինձ ևս ուղարկելու Ձեր «Պատմությունը»¹: Զարմանում եմ թե ինչպես կարող էր կորչել գիրքը: Ինչևիցե, շատ և շատ շնորհակալ եմ, հարգելի Գրիգոր Աբրամովիչ, ստացա, կարդում եմ մեծ հաճությամբ: Պիտի խոսեմ Ձեր գեղեցիկ աշխատության մասին, որ առաջինն է իր տեսակի մեջ, որովհետև Դոլենսի

և հաշի² աշխատությունը ինձ թվում է ավելի հրապարակախոսություն, քան գիտական պատմություն (Ի դեպ, դուք սխալվել եք, այս երկուսին հայ համարելով, հայ է միայն երկրորդը, առաջինը ֆրանսիացի է)։ Միայն չնեղանաք, Գրիգոր Աբրամովիչ, ես պիտի զանգատվեմ, որ հայոց պատմությունը օտար լեզուներով է գրվում, և հայերը մինչև այսօր էլ նստած են Չամչյանի³ վրա։ Չեք, իհարկե, պարզապես Ձեր դասախոսությունների հրատարակությունն է։ Բայց ես պիտի խնդրեմ, որ հայերեն հրատարակության մասին էլ մտածեք։

Խնդրել էի Ձեզանից Դյուլորիենի—«Recherches»-ը⁴, եթե այս բանը որևէ դժվարություն ներկայացնում է, խնդրում եմ միայն մի նեղություն հանձն առնել ինձ համար, այն է՝ ասել, որ ինձ ուղարկեն վերադիւր վնարով (եթե, իհարկե, կարելի է) և այդ զեղջումով, ինչ անում են սովորաբար գրավաճառներին, թե Դյուլորիեն և թե հետևյալ հրատարակությունները, որոնց ցուցակը տեսա Ձեր գրքի վրա. А. Крымский, История арабов; Арабская поэзия; История Персии, ее литературы, История Сасанидов, История Турции⁵։

Ես չափազանց մեծ փորձ ունեմ հավատալու, որ ամենաբարի Գրիգոր Աբրամովիչը ինձանից չի նեղանա այսպիսի հանձնարարությունների համար։ Ուստի գրում եմ առանց քաշվելու, ինչպես միշտ։

Ջերմագին ողջուցներով՝

Ձեր միշտ անփոփոխ Ա. Բարխանյան

13

1910, նոյեմբերի 20, Երևան

Մեծարգո բարեկամ Գրիգոր Աբրամիչ

Անշուշտ դարձացած եք լուսնյանս վրա։ Բայց վերջին ամիսների իմ թափառումները ուրիշ արդյունք չէին էլ կարող առաջացնել, Կիսկովոգսկից Թիֆլիս վերադարձա հոկտեմբերի սկզբին, ստացա Ձեր նամակն ու գրքերը, բայց հնարավորություն չունեցա պատասխանելու, որովհետև միայն 10 օր մնացի Թիֆլիսում և այժմ, ինչպես տեսնում եք, Երևանում եմ։ Աղջիկս ամուսնացած է մի երևանցի նորավարտ բժշկի հետ։ Ամսից ավել է ինչ նրա հյուրն եմ։ Միշտ այստեղ նստած չեմ։ Ճանապարհորդեցիք մի քանի տեղեր (Գառնի, Գեղարդ), 10 օր եղա էջմիածնում, ուր պարապում էի Մատենադարանում։

Եվ այս բոլորից հետո, ահա այսօր է, որ կարողանում եմ գրել Ձեզ, հարգելի բարեկամ։ Ամենից առաջ շտապեմ հայտնելու Ձեզ իմ ջերմագին շնորհակալությունը՝ Ձեր ուղարկած գրքերի համար։ Միևուրեք բարեկամական աջակցություն ինձ շատ և շատ եք ցույց տվել, Գրիգոր Աբրամովիչ, բայց այս մեկը գերազանցեց ամեն ինչ, երբեք չեմ մոռանա, որ դուք Ձեր սեփական գրադարանից ինձ գրքեր տվեք, որպեսզի աջակցած լինեք ինձ իմ աշխատությունների մեջ։ Ա՜հ, ո՞ր էր, եթե Ձեզ պես լուսավոր և ուշադիր բարեկամներ շատ լինեին։ Շնորհակալ եմ, Գրիգոր Աբրամիչ, շատ և շատ շնորհակալ եմ։ Ձեզ Դյուլորիեն կվերադարձնեմ ժամանակին շնորհակալությամբ։

Վիեննայից և Վ. Պոլսից Ձեր գրած բաց նամակներն ստացել եմ ժամանակին: Շատ ուրախացել էի, որ դնում եք Երուսաղեմ, և հետո ամսոսացի, որ չեք կարողացել գնալ: Ես պիտի Ձեզ գրեի, աղաչեի որ ամեն հնար գործ դնեք լույս հանելու Գրիգոր Դարանաղցու ձեռագիրը, որ գտնվում է Երուսաղեմում և որի արտագրությունը հնար չեղավ ձեռք բերել, թեև ես դիմեցի նույնիսկ վեհափառ կաթողիկոսին: Երևի դուք էլ ծանոթություն ունեք այդ ձեռագրի մասին, ժեղարի գործ է մի երկրորդ Առաքել Դավրիժեցի, կարևոր շատ և շատ կողմերով: Դուցե դուք նույնիսկ կարողանայիք հրատարակել էմինյան ֆոնդի՝ հաշվով:

Հույս ունեի ամառը տեսնել Ձեզ Թիֆլիսում, բայց հիվանդացա և զնացի Կիսլովոդսկ, հույս ունեի թե վերադառնալիս այդտեղ կմտնեի, այդ էլ չեղավ:

Ուրախ եմ, որ ուզում եք Ձեր «Հայոց պատմությունը»² հայերեն էլ հրատարակել: Շատ հարկավոր է այդ, «Հորիզոնին» լուր տվի նախքան Թիֆլիսից մեկնելու:

Նախահայկական շրջանի վերաբերմամբ դուցե Ձեզ համար հետաքրքրական լինի իմանալ, որ Մեսրոպ Լալիսկուպոսի հետ այցելեցի էջմիածնից մոտ 7 վերստ հեռու, դեպի արևմուտք գտնվող «Լըզըլներ» անունով բլուրը, մի շատ հին բերդատեղ, մի շատ ջրառատ տեղ: Բլրի զլուխը ժայռոտ է, և տափակ սև ժայռի վրա մենք տեսանք շատ շատ խոշոր, խոր և խնամքով փորված նշանագրեր, որոնք շատ նման են հեթեթական նշանագրերին: Որքան հիշում եմ, այս կողմերում այսպիսի արձանագրություն ղեռ չէ գտնված:

Ես էլ շարունակ աշխատում եմ իմ պատմության վրա³, նորանոր աղբյուրներ, նորանոր լուսաբանություններ եմ գտնում. միաժամանակ նյութեր եմ հավաքում գրականության պատմության համար:

Այստեղից Թիֆլիս կմեկնեմ, երևի, ամսի վերջին: Թիֆլիսի իմ մշտական և անփոփոխ հասցեն է. Белтинская ул., № 18.

Անրիվ և ջերմ բարեկեցով՝

Ջեր Ա. Բարախանյան

Հարգելի բարեկամ Գրիգոր Արամիչ

Ուշացրի պատասխանս, որովհետև ուզում էի ուղարկել Ձեզ «Հորիզոնի» այն համարները (132, 133, 134), ուր տպված է Ձեզ հետաքրքրող հոդվածս¹: Այդ համարները երեկ միայն ստացա և այսօր ուղարկում եմ Ձեզ: Առանց իմ ասելու էլ Դուք շատ լավ գիտեք, թե որքան ուրախ պիտի լինեմ, եթե Դուք, ինչպես գրում եք, Ձեր կարծիքները հայտնեիք այդ առարկայի մասին:

Տոնապետյանի նամակի առիթով ի՞նչ գրեի Ձեզ: Ջերմ ցանկությունս է, որ տպվի նրա թարգմանությունը: Բայց նյութական օգնություն հասցնելու ոչ մի հնար չկա: Վաղուց հեռու եք այստեղից, հարգելի բարեկամ, և չգիտեք ինչ կրիզիսի մեջ ենք ապրում գրողներս: Գրքի մասին խոսել չէ լինում ոչ ոքի հետ: Մեր գրականությունը մեռնում է հասարակության անտարբերությունից: Գիրք չէ տպվում, չէ ծախվում: Ձեզ կենդանի օրինակ՝ Հրատարակչական ըն-

կերությունը²։ Այս գրություն մեջ է, ի՞նչ կարելի էր անել։ Ես թողել եմ ի՞նչ աշխատությունները, տողավարձով լրագրական հոդվածներ եմ գրում, բայց լրագիրն էլ հազիվ-հազ է ապրում և տողավարձն էլ ստանալ անկարելի է լինում։

Ահա ինչու չգրեցի։ Բացի դրանից, զուր արտասահման էիք գնացել և նույնիսկ հայտնել էիք, որ նամակ կգրեք։ Ամբողջ ամառը ես այստեղ էի և չարաչար աշխատում էի։ Այս գրություն մեջ հեշտ էր մոռանալ, որ պետք է նամակ գրել։ Ինչ որ է, հույսով եմ, որ ներողամիտ կլինեք։ Ես ջերմ բարևներով մնում եմ՝

Ձեռ Ա. Բարախանյան
Հասցես. Белинская, № 18.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը հիմնադրվել է 1881 թ. Թիֆլիսում և գոյատևել է մինչև 1918 թ.։ Ընկերությունն իր մասնաճյուղերն ուներ բազմաթիվ բաղադրություններ։
2. Տրդատյանց Տրդատ—դրազվել է իրավաբանությամբ։
3. Լեո, Հայկական տպագրություն, մեր կյանքը, գրականությունը անցյալում, հատ. I, II, III, Թիֆլիս, 1901—1904։
4. Թաթայել Պատկանյանի մասին ուսումնասիրությունը տպագրվել է Հեռի «Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը» (Վենետիկ, 1904) աշխատության մեջ (Բ գլուխ)։
5. Գարրիել Պատկանյան (Տեր Գարրիել, 1802—1889)— բանաստեղծ, հայագետ, հրապարակախոս և մանկավարժ։ Պատմագիտական աշխատություններից են՝ «Հայոց ազգի պատմությունը» (Ս. Պետերբուրգ, 1863), «Միջնադարի հայոց ազգի պատմությունից» (Ս. Պետերբուրգ, 1863) և այլն։ Գարրիել Պատկանյանի մասին գրվածքը լույս է տեսել նախորդ ծանոթության մեջ նշված գրքում (Բ գլուխ)։
6. Քերովրե Պատկանյան (1833—1889)— նշանավոր հայագետ-արևելագետ, Ռուսաստանի կայսերական ակադեմիայի թղթակից-անդամ։ Մնվել է նախնականում, սովորել է լազարյան ճեմարանում, Դորպատի համալսարանում և Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտում։ Պատկանյանի գրչին են պատկանում 40-ից ավելի հայագիտական հետազոտություններ և բազմաթիվ հոդվածներ։ Պատկանյանի մասին հիշյալ ուսումնասիրությունը տպված է Հեռի վերջ հիշված գրքի Ա գլխում։
7. Հայ հասարակական գրադարան—հիմնադրվել է Թիֆլիսում, 1881 թ., Կովկասի հայոց բարեգործական ընկերության միջոցներով և գործել է մինչև 1920 թ.։
8. Նկատի ունի Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանը։

2

1. Ուղարկված են եղել՝ «Վահան Մամիկոնյան, հայոց պատմությունից» (Շուշի, 1888), «Հովսեփ կաթողիկոս Արղության» (Թիֆլիս, 1901), «Գլադստոն» (Թիֆլիս, 1899) և ուրիշ գրքեր։
2. Անկարելի է «Հայկական տպագրություն, մեր կյանքը, գրականությունը անցյալում» գրքի երկրորդ հատորը (Թիֆլիս, 1902)։
3. Հովհաննես լազարյան (1835—1901)— մեծահարուստ ազնվական, պետական և հասարակական գործիչ։ Նրա և նրա ժառանգների միջոցներով է հիմնադրվել լազարյան ճեմարանը։
4. «Մշակ», 1901, № 131 (Գր. Խալաթյան, Դիվան լազարյան տոհմի)։
5. Հանձնաժողովը այդ աշխատանքը կատարելու համար Մոսկվա է հրավիրում հայագետ և մանկավարժ Կարապետ Կոստանյանին (1849—1920), սակայն նա հրաժարվում է հանձն առնել այդ գործը։

6. Լեո. Հովսեփի կաթողիկոս Արղուսյան, Թիֆլիս, 1902 (արտատպություն «Մշակից», 1901, №№ 53, 54, 65, 67, 69, 79, 88, 89, 90, 155, 156, 157)։

7. Խոսրը № 1 նամակի № 3 ծանոթագրության մեջ նշված աշխատության III հատորի մասին է (Թիֆլիս, 1904)։

8. Հովսեփ էմին (1726—1809) — Հայ աղատապրական շարժման նշանավոր գործիչ։

9. Մասեաց աղավնի—ավետարեի Հայաստանյաց, Փարիզ, 1855—1858 (հայերեն և ֆրանսերեն), Բեռլին, 1859—1865 (հայերեն և ռուսերեն), խմբագիր՝ Գաբրիել վ. Այվազովսկի։

10. Էդմունդ Բրրը (Բյորբ, 1729—1797) — անգլիացի պետական, հասարակական և գրական նշանավոր գործիչ, պառլամենտի անդամ։

11. Էմինի գիրքը կոչվում է The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself, London, 1792. Երկրորդ հրատարակությունը լույս է տեսել 1918 թ. Կալկաթայում։ Ունի նաև հայերեն թարգմանություն՝ «Հովսեփ էմինի կյանքն ու արկածները. Հովսեփ էմինի անգլերեն ընթերցից թարգմանեց Ա. Խաչմանյանը» (Բեյրութ, 1958)։

3

1. Տոնադետյան Պետրոս—բանասեր և թարգմանիչ, թարգմանել է Լինչի «Հայոց պատմություն» գիրքը (1902 թ.)։

2. Նման հոդված «Մշակում», որքան մեղ հայտնի է, չի տպագրված։

3. Ս. Մալիուսյան, Հին դարերից. «Մշակ», Թիֆլիս, 1902, № 238, հոկտեմբերի 27 և № 241, հոկտեմբերի 31։ Հոդվածագիրը առաջարկում է «Պատմագիրք հայոց» մատենաշարով հրատարակել 50 և ավելի միջնադարյան հայ պատմիչների երկերը։

4

1. Ակնարկվող աշխատությունն է Խալաթյանցի «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников» (М., 1903) գիրքը։

5

1. Սարգսյան Լեոն Ռուբենի (1862—1926) — Ուսանել է Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի Կայսերական համալսարանը. պաշտոնավարել է Ներսիսյան, Դայանյան դպրոցներում, Լազարյան ճեմարանում։ Եղել է «Մուրճ» ամսագրի խմբագիր, Գրել է «Ժողովրդական կրթության գործը մեզանում», «Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց» աշխատությունները։

2. Լեո. Հայոց գրականությունը XVII դարում, Հնգկաստանցի ճանապարհորդը, «Մուրճ», 1901, № 9, էջ 137—150, 1903, № 11, էջ 143—163, № 12, էջ 140—157։

3. Крымский. История мусульманства, М., 1904, часть I, II.

4. Крымский, Агафангел Ефимович (1871—1914) — արևելագետ-արարագետ, սովորել է Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի Կայսերական համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը։ Շուրջ քսան տարի Լազարյան ճեմարանում դասախոսել է Մերձավոր Արևելքի պատմությունը։

5. Крымский А. Е., Исследование о 1001 ночи, ее состав, возникновение и развитие, М., 1904.

6. Крымский А. Е., Источники для истории Мохамеда и литература о нем., М., 1902 (лекции по Корану).

7. Крымский А. Е., История Персии, М., 1903.

8. Крымский А., Нельдеке Т., Семитские языки и народы, М., 1903.

9. Образчики персидской письменности с X века до нашего времени, составитель Мирза Абдулла Гаффаров, часть I, М., 1902.

10. № 4 նամակի ծանոթագրության մեջ նշված գրքի մասին է։

6

1. Տե՛ս № 4 նամակի ծանոթագրությունը։

2. Տե՛ս № 5 նամակի № 2 ծանոթագրությունը։

3. Խոսրը վերարժեցվել է Լազարյան ճեմարանի գիտական խորհրդի՝ 1903 թ. հայերեն

գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանին նվիրված լավագույն աշխատությունների համար հայտարարված մրցույթին:

4. Հնո, Անի, տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը: Առաջին անգամ հրատարակվել է Երևանում, 1946 թ. (ոչ լրիվ): Ամբողջական հրատարակությունը՝ 1963 թ. (Երևանի համալսարանի հրատարակչություն):

7

1. Գրիգոր Խալաթյանն իր «Армянский эпос в «Истории Армении» Монсея Хоренского» և «Армянские Аршакиды в «Истории Армении» Монсея Хоренского: աշխատություններում քննության առնելով Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», հանգում է այն եզրակացության, թե իրոք պատմահայրը իր գրքի հարկը բարձրացնելու միտումով խառնաշփոթություն է առաջ բերել ինչպես պատմական դեպքերի, այնպես էլ իր ապրած ժամանակի, ստեղծագործության հանգամանքների և միջավայրի վերաբերյալ: Նա պնդում է, որ Խորենացին ապրել է VII—VIII դդ. միջև և դիտմամբ ծածուկ է պահել իր օղորագործած աղբյուրների մի զգալի մասի անունները: Նրա կարծիքով, Խորենացու բերած հայոց թագավորների հաջորդական կարգը անապացույց մի բան է, իսկ «Պատմության» մեջ արձանագրված վեպերից շատերը հորինել է ինքը՝ պատմիչը, օտար առասպելների նմանությամբ: Խալաթյանը ընդհանուր առմամբ «Հայոց պատմությունը» գնահատում է որպես ոչ թե ճշմարիտ պատմություն, այլ գրական երկ: Հայտնի է, որ Խալաթյանի այս տեսակետը ընդարձակ քննության առարկա է դարձել: Խորենացու «առեղծվածի» շուրջ ծագած երկարատև վեճերը մեծ քանակ են խլել գիտնականներից և զգալի նպաստ են բերել հայագիտության զարգացմանը: Ներկայումս հայագիտության մեջ Խորենացին համարվում է V դարի ճշմարտապատում հեղինակ:

2. Նկատի ունի Հ. Գալրճյանի «Հինգերորդ դարու շրջա շալ պատմագրության ժամանակները» հոդվածը («Հանդես ամսօրյա», 1887, № 1):

3. Գր. Խալաթյանին դոկտորական աստիճան էր շնորհվել: «Армянские Аршакиды в «Истории Армении» Монсея Хоренского. Опыт критики источников» թեմայով Գր. Խալաթյանը պաշտպանում է դիսերտացիա և ստանում հիշյալ դիտական աստիճանը 1903 թ.:

4. Խոր էր տարածվել, թե Հնոն մահացել է:

5. Գր. Խալաթյանը 1903 թ. ամռանը, «Մշակ» թերթի աշխատակիցների ընկերակցությամբ (որոնց թվում և Հնոյի), այցելում է Անի: Այնուհետև Հնոն և Խալաթյանը շրջում են Արարատյան դաշտում, լինում են էջմիածնում, Երևանում, Օշականում:

6. Հաղարյան ճեմարանի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվելու էր «Էմինյան ազգագրական ժողովածու», որի գլխավոր խմբագիրը Գր. Խալաթյանն էր:

8

1. Ակնարկը Հնոյի «Ս. Մեսրոպ» աշխատության Անագրի մասին է, որը ուղարկվել էր Հաղարյան ճեմարանի գիտխորհրդին՝ մրցանակի ներկայացնելու նպատակով:

2. Լընորման Ֆրանսուա (1837—1883) — ֆրանսիացի արևելագետ, գրել է «Հին արևելքի պատմություն» (1868), «Առաջին բաղարակրթությունները» (1874), «Հնդկաստանի պատմությունը» (1868), «Շամիրամի լեգենդը» (1873) աշխատությունները: Նամակագիրը նկատի ունի՝ «Histoire ancienne de l'Orient» (Paris, 1883) գիրքը:

3. Մասպերո Գաստոն (1846—1916) — ֆրանսիացի հայտնի եգիպտագետ-արևելագետ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր: Փարիզի արևելագիտական թանգարանի գլխավոր դիրեկտոր: Ծանապարհորդել և պեղումներ է կատարել Եգիպտոսում, գրել է Եգիպտոսի պատմությունը 10 հատորով և այլ երկասիրություններ: Հնոն նկատի ունի Մասպերոյի հետևյալ գիրքը. Histoire ancienne des peuples L'Orient classique. Les origines, les premières mêlées des peuples, les Empires, Paris, 1895—1899. 3 vol.

4. Խալաթյանյի «Армянский эпос в «Истории Армении» Монсея Хоренского. Опыт критики источников» գրքի մասին է:

5. Նկատի ունի իր «Ստեփանոս Նազարյանց» (Թիֆլիս, 1902) գիրքը:

9

1. Բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյանը (1865—1917) մասնակցություն է ունեցել Հաղարյան ճեմարանի հրատարակչական գործունեությանը:

2. Այսինքն՝ հայ գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված «Հանրամատչելի մեսրոպյան զրադարան» մատենաշարին:

10

1. Այդ ուսումնասիրությունը տպագրվել է լեռնի «Հայոց պատմության» III հատորում:

11

1. «Գեղունի» պատկերազարդ հանդեսը տպագրվել է Վենետիկում, 1909 թ., Երիտասարդ թուրքերի կազմակերպած ջարդերի ժամանակ 1909 թ. ղոհվեցին Ադանայի և շրջակայքի ավելի քան 30000 հայեր: Որք երեսնաներին օգնելու համար կատարված հանգանակությանը մասնակցեցին նաև Վենետիկի Մխիթարյանները՝ «Գեղունի» հանդեսից ստացված գումարով:

2. Վեսելովսկի Յուրի Ալեքսանդրովիչ (1862—1919) — հայտնի ռուս գրականագետ, հայագետ և թարգմանիչ: Ուսանել է Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկվայի Կայսերական համալսարանը, գասավանդել հիշյալ ճեմարանում:

3. Պոտուրյան (Բուդուրյան) Մկրտիչ (1881—1959) — Վենետիկի Մխիթարյան միարանության անդամ, խմբագրել է «Բազմավեպը», «Գեղունի», «Աստղիկ», «Մասիս», «Գաղութի ծայն», «Փարոս» (Թուխարեստ) պարբերականները: Նրա գրչին են պատկանում միջնադարյան տաղերգուներին նվիրված մի շարք ուսումնասիրություններ, բազմաթիվ հոդվածներ: Կազմել է «Հայ հանրագիտակ»:

12

1. Գ. Խալաթյանի «Очерк истории Армении» (М., 1910) գիրքը:

2. Ակնարկում է հետևյալ գիրքը. Histoire des anciens arméniens. Par Noel Dolens et A. Khatch. Publ. par l'Union des Etudiants Arméniens de l'Europe. Genève, 1907.

3. Չամչյան Միրայել (1738—1823) — անվանի հայկարան, Վենետիկի Մխիթարյան միարանության անդամ:

4. Դյուլորիս էդուարդ (1807—1881) — ֆրանսիացի արևելագետ և հայագետ, ակադեմիայի անդամ, արևելյան լեզուների դպրոցի պրոֆեսոր: Հրատարակել է շուրջ 40 երկասիրություն՝ նվիրված Մերձավոր Արևելքի երկրների պատմությանը, լեզվին և քաղաքակրթությանը: Այստեղ խոսքը հետևյալ գրքի մասին է. Dulaunier, Edouard. Recherches sur la chronologie arménienne, technique et historique. Par M. Edouard Dulaunier, T. I. Paris, Impériale, 1859.

5. Այդ գրքերն են. Крымский А. Е., История арабов, их халифат, дальнейшие судьбы и краткий очерк арабской литературы. М., 1903 (лекции); Крымский А. Е., История Персии, ее литературы, дервишской теософии, т. I—II, М., 1904 (лекции); Крымский А. Е., История Сасанидов, М., 1904.

13

1. Էմինյան Ֆոնդ—նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինի (1815—1890) կտակած գրամազլիսի տոկոսները զործադրվում էին հայագիտական-ազգագրական հետազոտությունների և գրանց տպագրության համար: Այդ Ֆոնդի գումարներով 1901 թ. սկսած հրատարակվում էին «Էմինյան ազգագրական ժողովածուները»:

2. Նկատի ունի № 12 նամակի № 1 ծանոթագրության մեջ նշված գիրքը:

3. № 10 նամակի ծանոթագրության մեջ հիշատակված աշխատությունն է ակնարկում:

14

1. Լեռնի «Պատմական հարցեր» հոդվածն է, որ տպագրվել է «Հորիզոնում» 1911 թ. (№ 127, 128, 132, 133, 134):

2. Այս նշումը Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության մասին է (1880—1920 թթ.):

ПИСЬМА ЛЕО ГРИГОРУ ХАЛАТЯНУ

В. Г. ВАРДАНИЯН

(Резюме)

Публикуемые письма известного армянского историка и писателя Лео (Аракела Бабахаяна, 1860—1932), адресованные видному арменисту, профессору Лазаревского института восточных языков Григору Халатяну (1858—1912), содержат ценные сведения по армянской филологии и историографии. Они относятся к 1902—1911 гг. и хранятся в музее литературы и искусства им. Е. Чаренца (фонд Григора Халатяна, V раздел. № 169—183).